

Վ. ՕՇԱԿԱՆ

ԿԵԱՆՔԷՆ ՄԱՀ

Բառ բառի ծոց՝

մերկ ու լաիրշ պարմաններ կը սառստան պաղին մէջ
վրան-բաց ֆիլմի հերոսները անզգացում մը պշնին,
ի՞նչպէս ըլլալ... ինձմէ ասդին ու անդին՝ լոյսի մորթը կը արկուի
ուր են ուր են բուսիկ նիհար կը վազվզեն կոյս ամօթխած շղարշներով
կը ծածկուին

նշան կու տան ու կը փախին կ'անհետին,
սէրը քիմքիս կը չորնայ
կոպիս տակը կեանքը աւագ կը կոխկոտէ
ի՞նչպէս ինկայ սա գունճ կայան փշաթելի երկու կողմէն արտորական
հիւանդ անպէտ մաքսանենց կը բռնուիմ կը տարուիմ
իրենց նման կը կծկուիմ սովի շնմին:

Բայց մարդ չկայ դրան ետին

ոչ ալ առջին կը պահուըտին

միայն ձայնը ջրհեղեղին

երբ կը պատմէ կաթիլներուն հեքեպոները՝

ա՛ս է կեանքը -

ըլլալ որսը ու որսորդը նոյն ատեն

բռնել մէկ մէկ ու տարուիլ շընդդիմանալ չգիտնալ

իրար ետեւ թուղթին վրայ պառկեցնել

ոտքով ճզմել մեռցնել անէանալ՝ ու մեռնիլ:

Յետոյ դիտել ինչպէս ինչու կը խլրտին ոտքի կ'ելլեն

ո՞ղջ են թէ ոչ՝ մուրացիկներ կը սլքտան բերանները կը ճեխին

կեանքը ս'ա է -

ապրիլ չկայ, կայնիլ երթալ կարելի չէ
ոչ ալ հատնիլ գետին ծոիլ կօշիկի կապ թուլցնել
այլ լոկ կախուիլ բոզանոցի առաստաղէն
ջարդուփշուր սկիհները փողոց նետել
մարդոց պոռալ որ առտու է կէսօր է ու կէս-գիշեր այս վայրկեան,
գորշ վաւաշի մշուշին մէջ շեղ լոյսերով պիտի շողանք
պիտի կանչենք առանց ձայնի առանց շունչի լուռ աղմուկով
ու անհետիւնք ետ լլկումի շաղախին մէջ մակերեսին, խնդալով՝
ոչինչ ոչի'նչ հասկցած:

Ի'նչպէս ինկանք այս թակարդը -

ջորի ցոլքեր առաստաղին կը ցատկոտեն մեր կեանքը
ժամանակի ծուլներ մայրամուտի հեռուներէն կը ծփան
գիտակցութեան գորշին մէջ աղուաշ ջայլեր կը զարնուինք պատէ պատ
կ'իյնանք-կ'ելենք պոչ կշ բռնենք կաղանդի նուր ստանալու:
Լուրջ բան չկայ մինչեւ մահ
ամէն ինչը պիտի փախի իր խարխալը իմ մէջ ձգած
ու քարէ քար ցատկելով ցնորային մարախին պէս
անապատին վերջին աւազը հասնի՝ կանգնի երկվայրկեան -
լալազարի դաշտերէն շամբշտո կալաշ խրտուիլակի երազա՞նք է
կը տարածուի բալ շամանդաղ պանդոյրի՝
թէ գոռ գրդանքն է խեռ ու ոլոն շոշորդներու մղձաւանջին...:

Անցագիրս ուժգին սրտիս կը սեղմեմ: Մետաղի համ կայ բերանս:
Ոստիկանին շեշտ կը նայիմ, գիտեմ միտքէն ի'նչ կ'անցնի, պէտք չէ
ազդուիմ իր ձեւերէն, համազգեստէն, սեւ ակնոցէն:

-Վիզա չունիք... օգուտ չունի

-Գիտեմ, բայց ես երկիրս պիտի մտնեմ, հայրենիքս, պէտք չկայ վի-
զայի:

-Ձեր անցագրին ժամանակն ալ անցած է:

-Հոգ չէ, մէլ մը մտնեմ կը կարգադրեմ:

-Ուշ է Պարոն, այլեւս սահմանազուլսն ալ գոցուած է:

-Կարելոյ չէ, ես իմ երկրիս կայարանին մէջ մինչեւ առտու ալ կը
սպասեմ:

-Կալարանը փլած է, սպասման սրահ ալ չկայ, դուրսը բուք կայ, կը սառիք:

-Խնդիր չէ:

-Տուէք անցագիրը

-Չեմ տար... չեմ տար մինչեւ որ չխոստանաք կնքել զայն որ անցնիմ երթամ

-Ո՞ր պիտի երթաք աս ժամուն, մարդ մարդաստանը չմնաց մէջտեղ-ները, ոչ ալ թաքսի

-Ես կը քալեմ, վարժուած եմ

-Բայց ո՞ր կ'երթաք... ասկէ անդին չկայ, վերջին սահմանազրուխն է ասիկա

Ոստիկանը ձեռքը կ'երկարէ որ տամ անցագիրս: Փափուկ, ճերմակ մատներ ունի ժամացոյց մը ոսկիէ թղլ կախուած է դաստակէն, բաց կապոյտ է համազգեստը:

-Ոչ

Առանց մտածումի ինքզինքս պաշտպանելու համար, բայց տաք, հաւն-դարտ ձայնով: Ուժով կը զգամ հիմա, բայց ջղային եմ, գիտեմ, ու խումբայի մը եզերքին: Վիզս կ'երկարեմ -ո՞ր է ճամբան, ի՞նչ կայ սա անգոյն, մեռած պատէն անդին: Աջիս նրբանցք մը կը դառնայ, կը կորսուի: Լեզի համ մը կայ լեզուիս վրայ:

-Ի՞նչ, ոչ:

-Չեմ տար անցագիրս, չեմ հաւատար խօսքիդ:

-Մէկ ճամբայ կայ, դէպի ետ:

Կը հայիմ սեւ ակնոցներուն: Վրա՞ս կը խնդայ - լալտնի չէ:

-Ոչ

Սակայն գլուխս դէպի կռնակս կը դարձնեմ:

Ամայի է կաշարանը, միայն երկու սեւամորթ կիներ խօսելով, դան-դաղօրէն սրահին ձախ կողմերը կ'ալլեն: Պատերուն առաստաղին լոյսերը անտեսանելի ձեռք մը կը մարէ մէկ մէկ: Գոց են բոլոր դռները: Խե՞նթ են ինչ են, զիս հոս պիտի բանտարկե՞ն: Կը դառնամ ու-տիկանին

-Ա՛ս ինչ...

բառը բերանս կը մնայ: Մարդ չկայ քովս, ոստիկանն ալ մեկներ է: Ա-րագ մը չորս կողմս կը քննեմ - առանձին եմ...: Սեւամորթներն ալ զացեր են: «Կարելի բան չէ» կը մտածեմ «որ մարդ աչապէս մէջտեղ ձգուի ու ոչ մէկ ելք մնայ կեանքի մէջ, ոչ մէկ ուղղութեան ճամբայ մնայ...» Կալարանին սրահին կեդրոնը, անիմաստ լռութեան մէջ՝ կը կայնիմ, ճգմուած ու շուարած: Խումբալը գլխուս շուրջ կը դառնայ...:

Թուղթիս վրայ ճղհիմ յիմար միջատ մը ուշ մնացեր՝ կ'աճապարէ:

մինչ վիթխարի ինչ օրէնք կայ որ կը պրկէ ու կը վարէ
 տիեզերքի անեղ անբան փռուածքը՝
 կը շտկուի մահիճին մէջ կը դիտէ գայն, հմայուած՝
 ինքն ալ հետը շունչը բռնած, նոյնացած,
 խոտի շիւղին պլլուած անտէր, հիմար ու երջանիկ մրջիւն մը
 բարակ հոգուն թեւերուն մէջ կ'օրօրուի
 իր գանկին մէջ տեղաւորած համայն մարդոց ողբերգութեան գաղտնիքը
 ու սարսափը՝ անբառ, անհունչ աստուծոյ մը քոթիթոյին,
 անապատի սեպ ժայռի մը գագաթէն աւազի ծուռ հատիկ մը
 կը գլտորի իր տեղէն
 ու անկումը կը թնդայ, արձագանգը կը դղրդայ, կը թաւալի մինչեւ հասնի
 անջրպետի մառաններու մթին, մզլոտ խոռոչները,
 սերմի մէն մի ժիտ բջիջի պոչի ծայրի լողակներու ծփանքներէն
 մինչեւ ստերջ լեշկ ու հերձ մոլորակներու աստղերու շուրջապարերը մէջ
 մէջի՝
 սիրքի նոյն խումբն է որ պարապ սրահին առջին կը խաղայ,
 անանձնական անդերաւուն գիտակցութեան նոյն պատտառն է,
 անտէր նետուած նոյն ժառանգն է որ կը սպասէ -
 ու մենք ապրին
 բախտ կը բանանք, դեր կը սորվինք՝ եղունգներն ու կիժերը կը մաքրենք
 հարցնելով մութին մէջէն խարխափելով ո՞ր ճամբան է
 որ լուսաւոր հրապարակ կը տանի -
 հազարաւոր փողոցներէն փոթորիկը անեղ ուժով կը մռնչէ կը խուժէ
 ուրը Ռիխթըր երկրաշարժ կայ քաղաքին մէջ քսանչորս ժամ անընդհատ
 բայց շէնքերը չեն փլիւ ոչ ալ հողը կը բացուի
 մինչ գետնին տակէն ու երկինքէն դժոխային աղմուկը
 ամապացած տուններուն շուրջ կը դիզուի:
 Հաշմանդամը հեռուններէն կ'երերայ, ափը պատին կը փակցնէ, պիտի փլի,
 կը կքի
 մայրը ուժգին կը դողդղայ, կը սալթարի, պիտի իչնայ՝

քալ մը կ'ստնէ -

ու դեռ հոն եմք, ալ մէկ քալը, պատին տակը անշարժացած,
գիտակցութեան դազկահին մէջ պինդ պրկուած հորիզոնէ հորիզոն
ուր կը բանուինք մենք մեզմով բարակ թելը ժամանակի ջուլհակին
պզտիկ սարդեր՝ մեր ոստալնով կը ծնինք մեզմէ մեզի կը նետուինք
ու կեանք կու տանք խոռ ու փախուկ տուն-մնացի հաստոցին՝
որու կողքին աչապէս որքա՞ն դեռ կը կկզինք
որ գալ կեանքի մոլոր փշրանք հեղ մը հափ սպասումի ձիգ ցանցին
ու սարսուանք խենք հրճուանքով եւ ապրելու կարօտներով սովաքաղց
վրան վազենք, բռնենք սեղմենք, կառչինք անոր որ ուժ առնենք
մենք, համշմանդամ անցորդներ ողջ ողջ թաղուած լաւային տակ հիւլէներու
մենք, տառապանքի անվերադարձ խաշակիրները առանց ճամբու եւ լոյսի:
Սակալն, սա սեւ լոյսին ինչքա՞ն դիւրին վարժուեցանք ցերեկ գիշեր
մերկ կը քալենք եւ ու առաջ պատերուն մէջ ժամադրութեան
ո՞վ որու է կը սպասէ հագուած շքուած ու մոռցուած իմ մէջս
մարդէ շինուած տիեզերքի միակ մարդը որ մարդ չէ
բալ հմայուած գեղօր մը՝ կախարդներու մղձաւանջին մէջ բանտուած
որ աչքքան դար՝ կառչէր է պատրանքներու լուսամուտին ճաղերուն
ուրկէ կու գան հազարատր պանդուխտ անտուն սա վանկերը լորձահովուն
փաթթուած

նե՞րս կը մտնեն գանկի տուփէն թէ դէպի դուրս կը խուժեն
բոլորը մէկ չորցած տերեւ կը հաւաքուին ոտքերուն շուրջ
ու կը լուշեն անծանօթին կարօտներէն հող ըլլալու մարդ ըլլալու
լոյսի սրտին նստած մութին մանկանոցի արթունակին կծկուած
ալնտեղ մայթին, յիսունը անց ու անդամատ որմնադիր
պարապին մէջ ամբողջ կեանքին մէկ քալ առած՝ ու չառած:
Այսուհանդերձ ամէն վայրկեան կը պատրաստուիմ ապրելու,
մէն մի բառի կաղապարի եզերքներէն դուրս թափած արեւցոյթը
երկու ձեռքով կը հաւաքեմ խելալեղ
բայց ո՞ր դնեմ, ի՞նչ ընեմ...

ճիշդ նույն պահուն աղբակառքի ձայնը կ'առնեմ փողոցէն

դուրս կը նետուիմ ու ետեւէն կը վազեմ

մէկ ձայնի վրայ կը պոռամ

«Հէ՛յ աւագակներ... ո՞ր կը տանիք ամէն բան»

բայց ան արդէն հեռացած է, փշրանքներու հետք մը ձգած իր ետին

զոր թռչուններ այս անգամ ալ կը փախցնեն կը տանին:

Առտուայ 8:30ն էր եւ օրուայ դատական առաջին պարագան ես էի: Փութեմ փայտ, հին թուղթ ու քրտինք հոտող դատաւարահին մէջ չորս հոգի կար միայն: Դատաւորը ներս կը մտնէր արդէն, սեւեր հագած, նիհար, անմփայտ դեմքով մէկը: Հմայուած կը նայէի իրեն

-Ոտքի ելիր:

Ոստիկանն էր, քովէս: Կայնեցայ: Դատաւորը նստաւ, գլուխը ծնեց սեղանին անշարժացաւ. բան մը կը կարդար, իմ թղթածրարս, հաւանաբար: Դուրսէն, հսկայ շէնքին նրբանցքներէն՝ մարդու անպէտ աղմուկ կար բայց հոս լուռ էր: Բերանս կը չորնար ու դատաւորի ետին պատուհանին ապակին ճաքած էր:

«Ես յանցաւոր չեմ» ըսի միտքէս բայց սիրտս ուժգին կը զարնէր

- Աս մարդը ինչո՞ւ հոս բերած էր:

Առանց ինձի նայելու խօսած էր, անխորժ, անհամբեր ձայնով մը: Ծորջս յանկարծ այնքան ամաչի թուեցաւ որ ուշադրութիւնս ցրուեցաւ, միտքս գնաց դուրս, երէկ չէ առջի օր Սաթըրն մոլորակին քովէն անցած աստեղ մեքենան արուած էր: «Ես յանցաւոր չեմ» կրկնեցի միտքէս: Ոստիկանը քովէս քալլ մը հեռացեր էր ու ձեռքը սեղանին եզերքին՝ կը պատրաստուէր խօսիլ: Գեղանի, յաղթանդամ երիտասարդ մըն էր, շէկ մազերով - ամբողջ կեանքս իրեն նման մէկը ուզած եմ ըլլալ եւ ոչ թէ սա հիւանդկախ, անշնորհք, անընկեր մարդը: Բայց քառասուն տարու եմ ալլես ու անոր վարժուած եմ - ամէն լաւ բան միշտ ուրիշներու տրուած է:

-Ամիսը անգամ մը խնդիր ունի մարդոց հետ, գլխու փորձանք է, Տէր Դատաւոր:

Չեմ գիտեր բողոքե՞մ: Սխալ է ոստիկանին ըսածը, ես գլխու փորձանք չեմ, ես միայն կը փորձեմ ապրիլ, ապրելու իրաւունքս օգտագործել: Բայց կը լռեմ:

-2որրորդ անգամն է յիմար բաներու համար ոստիկանատուն կը բերենք: Առաջինը Կաղանդի գիշերն էր... աս մարդը եկեղեցի մտեր էր կէս գիշերուայ պատարագին ու սկսեւ էր, կրօնականներուն պոռալ իրաւունք չունիք մարդիկը խաբելու... ոճիր է, ոճի՛ր... դուք ճշմարտութիւնը կը սպաննէք... մեղք են խեղճ մարդիկ... աստուած խամաճիկի վերածելը էք, խրաւովյակ բրեր էք... կը բողոքեմ ու ասանկ բաներ: Վերջը վարդապետին հետ գրեթէ կոտորուեցաւ:

-Խմա՞ծ էր:

- Ոչ, Տէր Դատաւոր, չէր խմած:

Դատաւորը դեռ չէ մայած աչքերուս: Ոստիկանին ըսածը ճիշդ էր սակայն ինչ որ չ'ըսեր՝ այն է թէ ատանկ խօսքեր եթէ հանդարտ ձեռով ըսեմ՝ մարդ չի լսեր: Ծուրջս կը քննեմ, առանց անձկութեան - երկու կիւն, երեք մարդ ու երեխայ մը կայ սենեակին մէջ: Հինգ հոգի եւս լսեցին խօսքերս: Ուրախ եմ ու ետ դատաւորին կողմը կը դառնամ: Ոստիկանը կը շարունակէ

- ... չետոյ օր մը ոստիկանատուն թելէֆոն եկաւ որ մէկը Մեծ Կալա-րանի կամուրջին վրայ մերկացած էր եւ կօշիկ, հագուստ մագուստ կը ծախէր անցորդներուն: Գացի՞նք բերի՞նք: Ինքն էր:

Աս ալ շիտակ էր: Յանկարծ դատաւորը շիտակ աչքերուս մայեցաւ եւ ցած ձայնով հարցուց

- Ինչո՞ւ:

- Տէր Դատաւոր, սկսաւ ոստիկանը բայց ան լռեցուց:

-Քեզի չեմ, տասնապետ: Ամբաստանեալին:

Պատրաստուէր էի այս հարցումին ու առանց վարանելու, ինքնա-վստան ըսի

- Դրամի պէտք ունէի

- Հոս գրուած է որ հիւսն ես, լաւ է գործդ:

-Այո, Տէր Դատաւոր. լաւ է գործս. սակայն չի բաւեր, ծախսս շատ է:

-Ինչո՞ւ, ո՞ր կը ծախսես դրամդ

- Ուտելու, միայն ուտելու:

- Ի՞նչ

-Ուտելու, Տէր Դատաւոր:

Երկվայրկեան մը լռութիւն էր: Գիտէի որ պիտի չհաւատար, մարդ չէր հաւատացած, սակայն նորէն պատրաստուեցայ խօսելու: Դատա-ւորը առաջ ծռած՝ նիհար մարմինս կը քննէր

- Անօթի եմ, ես ամէն վայրկեան անօթի եմ, Տէր Դատաւոր... կշտանալ ինչ է չեմ գիտեր, որքան ուտեմ, ինչ որ ուտեմ՝ անօթի եմ, միշտ, գիշեր ցերեկ... տեւական պէտք է ուտեմ:

Դատաւորը ճաղատ գլուխը շարժեց, թերահաւատ էր, գիտէի, չէի մեղադրեր զինքը, իր տեղը ես ալ պիտի չհաւատայի

-Եթէ չ'ուտե՞ս ինչ կ'ըլլայ:

- Չեմ գիտեր... չեմ փորձած, կամ կը մեռնիմ կամ ալ բան մը չեմ ըլլար, անօթութիւնը կը շարունակուի... քանի մը անգամ մորացած եմ, գողցած եմ

- Սակայն նիհար միհար բան մըն ես...

- Գիտեմ... կ'ըսեմ կոր ձեզի, Տէր Դատաւոր, օգուտ չունի ուտելը բայց պէտք է ուտեմ... անօթութիւնը կեանքս է:

Նորէն լռութիւն տիրեց

-Անօթի՞ ես հիմա

- Այո, Տէր Դատաւոր:

Դատաւորը դարձաւ ոստիկանին ու գլխով նշան ըրաւ որ շարունակէ

- Անցեալ շաբաթ երկու անգամ ոստիկանատուն բերինք որովհետեւ փորձած էր շուկային մէջ երկու գրատուն կրակի տալ, անգամ մըն ալ Պետական Մատենադարանը ուզեց այրել, քանի քանի անգամ թէյէֆոնի գիրք կրակի տուած է, պատուած է...

Դատաւորը ուշի ուշով ինձի կը նայէր հիմա: Ես ալ ուղիղ իր աչքերը սեւեռեցի: Վախճալիք կամ բաշտելիք բան չկար եղածին մէջ, այո, ճիշդ էր ըստածը իմ մասին:

- Ասիկա շատ անելի լուրջ բան է, ըսաւ դատաւորը կզակը բռնելով

- Արտօնեցէք որ բացատրեմ, Տէր Դատաւոր, ըսի, իմ հերոսական արարքներէս ուժ առնելով: Ձայնս այնքան թեթեւ կու գար ականջիս որ գրեթէ ուրախ էի:

-Լաւ, խօսէ՛:

- Բառերու հարց է, Տէր Դատաւոր: Բառերը բառ չեն այլ սուտ, կեղծ, խարդախ, մոյցիսկ անբարոյական բաներ են որովհետեւ գող են, իրականութիւնը կը գողնան ինձմէ, չեն ձգեր որ ապրիմ, գիրքերու եւ գրութիւններու մէջ կը պահուողսին եւ կ'արգիլեն որ ապրիմ... կը մեռցնեն զիս: Ոստիկան ու դատաւոր իրար նայեցան: Հասկցալ ինչ կը խորհէին: Անմիջապէս անելցուցի, անձկալի

- Խեղճ չեմ ես:

- Քեզի խենթ ես ըսող չկայ:

- Չէք ըսեր բայց կը խորհիք:

- Ոչ ալ կը խորհիմ:

- Ուրախ եմ, Տէր Դատաւոր:

Անկեղծ էի որովհետեւ շատ յաճախ զիս խենթի տեղ դրած էին մարդիկ:

-Իմ կռիւս, Տէր Դատաւոր, մարդոց հետ չէ, մարդիկ երեւոյթ են, սաղարթին մէջէն թափանցող արեւուն խաղն են գետնին վրայ, ես շուքերու հետ չեմ չափուիր: Իմ կռիւս՝ բառերու հետ ալ չէ, անոնք ալ մարդէ ու տերեւէ շինուած բաներ են, անմեղ են... իմ տարտս՝ աչքերս բաց պահելն է, չկշտանալն է, զոհ չերթալն է, էշ նահատակ չերթալն է:

Դատաւորը ետ կոթնեցաւ բարձր արօռին: Հասկցա՞ծ էր ըսածս...

- Ինչի՞նչ զոհ չերթալ, ինչի՞նչ:

- Ձեմ գիտեր, մի հարցնէք, Տէր Դատաւոր... միայն սա գիտեմ որ կենաց մահու հարց է, ապրելու եւ չապրելու տարբերութիւնն է...:

-Ատո՞ր հաճար է գրադարանները կ'ուզես այրել, ուտելիք գողնալ:

- Այո, Տէր Դատաւոր, գիրքը պիտի այրեմ որպէս սէնպուլը բառին եւ բառը՝ որպէս սէնպուլը...

Լոնցի յանկարծ, ի՞նչ կրնայի ըսել որ բառ չ'ըլլար: Ծուարած՝ Դատաւորին նայեցալ, ձեռքերս օդին մէջ, բերանս բաց

- Ինչի՞նչ...

Ինքն էր հարցուց վերջին անգամ: Հասկցա՞ւ, չհասկցա՞ւ՝ չեմ գիտեր:

Մէկ բան մնացեր էր ինձի անլցնելիք, ատկէ ետք պիտի լռէի:

-Բառէն անդին, բառէն ետք՝ կեանքը կայ, Տէր Դատաւոր:

- Ատկէ առաջ պատիժ մը կալ:
- Այո: Գիտեմ:
Ուրախ էի: Ու լռեցի:

Վայրկեաններու միջեւ պարապ աթոռներ կան
որոնք միեւնոյն կիսամութ՝ մէկիկ մէկիկ առանց ձայնի կը լեցուին
շուարումի լուղարկաւոր սեւ մարմիններ
չէ՞ք տեսներ թէ օդէն կախուած վերացական սարդի նման բան մըն ես
որ գոյութեան վիճերու վրայ՝ անշարժ մինակ լքուեր է,
թուխւոյ խաւարի սոթ լոռիքեան անքիմք անհոտ
հակահեխուած լեշկութիւն
չկայ ծերպ մը ոտքս դնեմ մատս հայի
բառէն զատ,
վարմ դիաշու
կուրտ ու վարար մերկութիւն:
Ու ես ասդին
հեղուկ արձան իմ դամբանիս գլխուն դրուած կ'երերամ
ձեռքեր անվերջ զիս կը ստեղծեն կը քանդեն
բայց չեմ մեռնիր ու չեմ ծնիր
այլ առտուայ պաղ ոտքերով խաբխուլ բուպիկ լոյսին հետ
կը սարսռամ կը սլքտամ անկողինէն ետ խոհանոց
պատուհանին ետին կայնած՝ կը փխրուիմ անջրպետի վժժոցին մէջ
որ կը շարժի տան առջեւի փողոցէն՝ երկու կողմը
ծառի մրափ, խոպոտ ճաղատ շուար մարդիկ, քնատ լուռ կիներ
ձառ փշրուող պառուներ անկիւններէն ծակուծուկէն կը հաւաքուին
ուղտերու պէս ոտքի կ'ելլեն կը շարուին
անգամ մըն ալ անապատը կտրելու:
Փողոցին մէջ կոյր թափառիկ յիշատակներ դադաղ մ'առած ձեռամբարձ

արագ արագ կը հեռանան կ'անհետին
պարա՛պ էր եւ ո՛ր տարին
հիմա հատ մը եւս կը տարուի, յետոյ ուրիշ մըն ալ
բան մը անդուլ կը պարպուի կը լեցուի ու կը տարուի ճամբուն ծայրը
գաղտնի տեղ մը կը թափուի
բայց չի հատնիր լոյսի մաշուք կը շխրտայ կը վիժի
շուրջս անվերջ պիտի մեռնի պիտի ծնի նոյն խաչին վրայ
չվերջացող հոգեվարք՝ առանց ցաւի ու լացի
մինչ շաղախը կը կարծրանայ ու վանկերու օղակները կը պրկուին, կը

սեղմեն

սակայն կեանքը կեա՛նքը՝ կ'ուշանայ...

ու կը քալեմ հանդիպումին ուր որ ըլլայ,
ժամանակը մեքենական սանդուխ է, լոկ դէպի վար կը շարժի
կը բարձրանամ կը բարձրանամ բայց նոյն տեղն եմ
կարելի չէ ճամբայ ելլել,
ալ ձանձրացայ ինքզինքս լրտեսելէն, հալածելէն
ու չոզնած եմ գոց դռներուն եւ փեղկերուն զարնելէն ու պոռալէն որ
բանայ

ներսը մէկը չի բնակիր ու պարապ է պատշգամի բազկաթոռը,
ալ ծերացայ անցորդներու հարցնելէն -

«Ինչպէ՛ս գիտնամ թէ կ'ապրիմ...»

Աշխարհի մէջ ամէն ինչ շարքի մտեր՝ լուռ, համբերող՝ կը տեսէ
միայն ես եմ որ խելաչեղ ասդին անդին կը վազեմ տեղ կը փնտռեմ
ոչ գիծին մէջ կրնամ մտնել՝ ոչ ալ գտնել ուր է ծայրը
կամ ալ ինչու հոն կեցեր են, ծեր գործագուրկ բանուորներ
իրենք զիրենք ողջ ողջ կլլած ու աչքերէն դուրս պշտելով...
հացի պարապ սակառներու փշրանքները ծամելով ու ծամելով...:
Ի՞նչ է, ի՞նչ է աստուած իմ, այս ամբողջը...

եղածովը, չեղածովը, առ յափտեան չըլլալիքովն ու բոլոր անով
որ օրին մէկը կրնար ըլլալ, ուզեց ըլլալ, պիտի ըլլար՝ բայց չեղաւ

անհետ կորաւ, ո՞ր գնաց, ի՞նչ եղաւ, ինչո՞ւ չեղաւ
եւ ձգեց որ անելներու քառուղիին ես կայնիմ
միակ վկան, միակ զոհը, միակ ներկան՝
որ պինդ բռնած տիեզերքի մագերէն
զայն կ'ազատէ անգոյութեան խորխորատի անգղերէն
մարդու մորթով զայն ծեփելով ծպտելով,
միակ անբայ, միակ անդէմ դերանունը
զոր մենք կ'ապրինք մէկգմէկէ գողնալով
սուրճի գաւաթ նայելով ու խաչբառեր լուծելով
երեկոյեան եօթին յանկարծ ծղրիթներու մարմինները կ'անէանան երգին

հետ

ետին թողած ծառին կառչած պարապ փխրուն կեղեւներ,
վայրի ժալը հողին կուշտին վայրագ խրեր՝
համբ, անհրաժեշտ իր գաղտնիքին հետ լիացած,
անգէն բոյսեր ու անհեթեթ, ծիծաղելի միջատներ,
խոնապահար, չվերջացող հովու փախուստ,
լոյսի հարսնիք՝ իր հաստ քողը նետեր է աշխարհին՝ բան չենք տեսներ,
նիհար ծառ մը իր լոժիքին պլլուած՝ վիհին շուրթին կը ցցուի -
ինչ որ բախտով՝ սուտով կամ հրաշքով
էութեան մը կեղծ անցագիրը գտած է
յանկարծ գաղտնի սահման մը կը կտրէ ու անշշուկ՝ աւարտած է, ալ չկա՛յ
միայն ես եմ կը թափառիմ մօ մենզ լէնտ
սահմանագլուխ կը փնտռեմ ցերեկ գիշեր, որեւէ գիծ ու նշան
հետք մը, բիծ մը՝ թէ կեանք կայ այս մոլորակի երեսին:
Բայց ունայն է -
ոչ մէկ հիւլէ առագաստի կէս-գիշերին յանձնուեցաւ թեւերուս,
ամէն կողմ բառ ու միայն բառ՝
բայց ոչ մէկ հատ՝
որ ողջ ըլլայ կեանք վարակէ
որ մահուան մէջ՝ մահը ըլլայ

բայց շմեռնի ու շարունակե,

այլ

ձգախեծէ անքակտելի շղթաներ.

զիս փակցուցեր կրկնապատկեր աշխարհին,

խաւաքարտէ տիեզերքի ահեղ սոսիճձ,

իմաստներու անտաշ, անգիր տապանաքար,

հազարաւոր փանաք, խարխուլ լաստեր՝ որ կը ծփան

անբառ, անհունչ, անլռութիւն, խենթեցնող

սահմանազանց անմարդկային ու անաստուածային

ինչի՞, ինչի՞ կոհակներու կռակին....:

Միայն ես եմ շուքի մարմին ինձմէ անդին կ'երկարիմ

ու կեանք կու տամ երկվայրկեանի արմատներուն

մինչ կը մեռնիմ պանդխտութեան խաներուն մէջ

ու կը նետուիմ անցեալին, յուշի թեւեր էգ հուլանի զիս կ'օղակեն

պիտի ծնիմ անարգանդ, գէթ մէկ անգամ շունչ մը քաշեմ՝

բայց դուրս չտամ այս անգամ, պահեմ մէջս

սուզուիմ երթամ գտնեմ բաց, կոտտացող ցաւի խինդի երակը....:

Օգուտ չունի -

մեր աշքերուն՝ լուսինը երբեք չլիացաւ

մեզի համար յղութիւնը եօթն ամիսը բնաւ չ'անցաւ

ու կ'էսորուայ սլաքները ճամբու ծալքը չսպասեցին իրարու,

մեր աշխարհը ոչ կ'որ է ոչ ալ լեցուն

ու մենք պարարտ, խելքը գլուխը, քիթը գործին, կոճկուած

աստուածավախ, տուն-տեղ շինած, շէնքով-շնորհքով մարդիկ չենք

մենք անժառանգ, անգերդաստան անմիտոն

շունշանորդի ու միորձի բիճեր ենք,

միշտ հոս էինք, այս անկիւնը, խումբով կայնած

բնատ, լկտի, սովալլուկ, գրպանը ծակ մակըրներ

անյիշատակ դարերէ գէթ մէկ զոհի սպասող,

կամաց կամաց կը մեծնանք բայց չենք փոխուիր

սառած կայնած արուարձանի պատուհանին՝
ճանկերը հանուած, գիրուկ անձայն կատուներու փաթթուած կիներ կան
աշնան թափուող տերեւները պիտի հաշուեն որ ապրին,
մահը կ'իջնայ անշշուկ ու կը դիզուի ամառնային չոր փոշի
կարասիները կը ծածկուին, լռութիւնը կը ծերանայ
հիւանդ յոգնած սրտերէն սիրոյ դագաղ դուրս կը հանուի ամէն իրիկուն
մութ կոխելուն, պզտիկ տուփը, տասը ամսու կար կամ չկար, ճամբայ կ'ելլէ
էրիկ կնիկ միակ անխօս յուրակատր տարիներով չի հատնիր
մեռնինք երթանք լմննայ, սա վերջ չունի ոչ ալ սկիզբ
մենք ի՞նչ գիտնանք ինչ են խաղին օրէնքները
մեզ հոս բերին բեռնակառքով դաշտին եզրին թափեցին ու մեկնեցան,
մենք ալ հիմա պիտի ապրի՞նք, պիտի մեռնի՞նք թէ սպասենք
կարելի է սխալմունք է, կու գան մեզի կը բացատրեն, ներողութիւն կը
յանդերեն,

հիմա խոտին նստինք, սանտուիչները քոլաները դուրս հանենք
կարելի է դեռ յոյս մը կայ...:
Կեանքս անցաւ մայրի եզրին կառք շարելու տեղ փնտռելով
ուր որ գացի ինձմէ առաջ ուրիշ բան մը արդէն հոգ էր
յանկարծ ծնած մեծցած հոգնտեղ դրուած տեղս առած պատը մարդը, ծա-
ռ'ը, ծա'յնը

իր բառին մէջ թխմուած ու կոճկուած, կոճակն ինձի դարձուցած
ամօթախած եւ աղօթելով հաւանաբար որ խնայեմ իր կեանքին
երկուքս ալ նոյն յուռութքին կալանատր՝ գիրար պիտի ապրեցնենք
նետուած գութի անծիր պատրանքին մէջ: Բայց ապրիլը
ճանաչեմ է ու արձագանգ, ջրդեղ, ծփանք, ցուք շողարձակ
հանրային պարտեզի ձրի պոռնիկ՝ ակնթարթի մը համար
յետոյ չկայ, անցեր մահուան թերթուն մէջ՝ զիս կը յիշէ
ու կը սպասէ տրտում, անյոյս աշխարհ լեցուեր կը յորդի
հեղեղը մեզ կը տանի փախուստ չկայ ինծի համար
զիս դրեր են տիեզերքի կեդրոնական հրապարակի մէջտեղը

ես, փէք բշիշ կը մղձկիմ շուարումի թորշին վրայ
մինչ ծովածաւալ չեղծ բազմութեան եռուզեռը կը խլրտի
կը ժխորի, կը խռնուի ու կը վխտայ
բիր շօշափուկ տեղդագին վրաս փակեր՝ կեանք ու իմաստ կը փնտռեն
ի՞նչպէս հասնիմ բոլորին
ասֆալթին վրայ ճգնուած կէճճ մարախներ
սիրտը ճաթած թռչուններ ու ծերացող ծաղիկներ
ամէն կողմ մարդ՝ մտ բանտի լուսամուտէն դուրս կը հալէ
բան մը կ'ուզէ հաղորդել՝ զոր ոչ ոք կը ճշմարէ,
կատակասէր հրեշտակներ տրտում սուրբեր՝ տառապանքի աղօրիքին

լծուեր են

ուզածիդ չափ դուն աղօթէ ու պոռայ որ կեցնեն

չդարձնեն այլեւս, ալ չես կրնար դիմանալ...

օգուտ չունի, խուլ են, խո՛ւլ -

յոյսս սեղաւ մօր կապեց՝ ապականած մթնոլորտէն քաղաքին

պէտք է լռել, ալ չխօսիլ բառերով՝

որոնց դիերը չեն թաղուիր ու կը նեխի

ամէն մէկը մահուան հունտ՝ որ աւելի ուշ

պիտի խեղդէ կեանքի ազատ, ձրի ու ջինջ բխումը

մինչ տղմուտը տակաւ պիտի թանձրանայ,

պէտք է լքել ամէն յուշ իր մարմնաշէ դազադին մէջ քնանանց,

չխանգարել գիտակցութեան մառաններու պատուցները

ու չխաբուիլ կեղծ ժամանակի նմոյշներէն, արթննալ՝

անթարթ դիտել մէկ ու միակ, նոյն անփոփոխ պէքեարը խման վայրկեանը

որ ցերեկը կը ծպտուի կը տողացնէ մեր առջեւէն հազարաւոր դարէ ի վեր

իսկ գիշերը կը սողակի, հաւանաբար, մեր մարմինի նրբանցքներէն

կողուպտելով ու քանդելով ինչ որ գտնէ....

Աս ի՞նչ դաժան որոգայթ է, աստուած իմ

զոր լարեր ենք մենք մեր ձեռքով մեզ համար

մեզ որսալու առտու կանուխ, քունը գլուխը, անկողինէն նոր ելած,

մահէն կեանք ու ետ մահ մինչեւ կեանք նորէն
խաղի թողթեր կը խառնէ հա՛ կը խառնէ, շուրջը նստեր կը սպասենք
ելքը ուր է, մուտքը ուր է յայտնի չէ, մէջը ինկեր ի՞նչ ընենք
սովահար ու պապակած դեռ շարունակե՞նք սեւ արեւուն լոյսին մէջ
ալ ո՛ւր փախինք՝ անապատն է միրաժը...:

Ամէն մահ՝ ոճիր է որ ես միայն կրնամ գործել ու զգալ
ու կեանք կոչել նոյն շունչով

գիտնալով թէ ուրիշն է որ կը մեռնի գութիս մէջը խեղդուած
մռայլ մամուռ որ կը ծածկէ ցումի փոսեր,
ամէն կեանք՝ արկած մը է միայն ձեզի կը պատահի
կողոպուտը կռնակնիդ՝ զիս հեռուն կը հեզնէք,
թանգարանի խորհրդաւոր, անագիտ, տարաշխարհիկ առարկաներ՝
կը պատիմ ձեր մէջերը բայց չեմ կրնար ձեզ դպնալ
ոչ ալ լքել ազատիլ՝ դուռ պատուհան կղպեր եմ՝
զիս իմ մէջը բանտարկեր:

Ա՛յս է մահը -

անտես փինչեր առանց լուրի կը փախին
պզտիկ աղուոր զսպանակներն ու մոյթերը ոսկորներուն՝ կը թուճան
մինչ անդին դուռ պատուհան տեղի կու տան, դուրսի թաթառը ներս խոժէ
փարփառ մոմը այլայլի, վերջին ցոլքը դալկանայ
մինչ մութին մէջ անլուռ անխիղճ բամբասանքը
ներս սպրդի, տեղաւորուի բազմոցին
ու վերջ գտնէ՝ պատէն անդին, ցանկապատին միւս կողմը
մանկապարտէզի զբօսանքը,

եւ այն ատեն, նոր արդուկուած թոռուկները գորգին թափին
ու պարապը յանկարծ ցցուի՝ հոն ուր մէկը կը բնակէր,
պիտի կախուինք ու հօ՛ պոռանք փոսին մէջ,
սարսափահար:

Ա՛յս է մահը -

անունջ վերքը կամաց կամաց պիտի բուժուի ու կոտտանքը մեղմանայ.

պիտի դադրի երկրաշարժը
խորունկ շունչ մը պիտի քաշենք, մայթին վրայ երկննանք
քուներնիս գայ, երազենք
դրամ գտնենք խոտերուն մէջ, մերկ մերկ վազենք ու թռչի՞նք՝
բայց չարթննանք որ չփախչինք երազը
ուրիշ չունինք ատկէ զատ,
տիեզերքի քունին մէջէն ոտքի ծայրով պիտի քալենք
ինչպէս շուքը երեկոյեան՝ պիտի անցնինք կեանքէն մահ
մեր հետքերը հաւաքելով մեր ետեւէն ամէն քայլի
մայր ու սալոն մաս մաքուր են, կարծես մարդիկ չեն ապրած
ոչ մէկ փաստ կայ տառապանքէն, սարսափներէն, տենչերէն՝
միայն մէկը հինցած ուստիոն բաց մոռցեր է ու գացեր
ձայն մը լուրերը կը կարդայ, Ֆրանք Բըրտիոն իր վառեակները կը գովէ,
լոյսը վաչրի գազան մըն է հազար կտոր կը յօշոտէ՝ բզիկ բզիկ կը ցրուէ
անգէն տկոյր ինչ որ գտնէ կրկեսին մէջ ուր մոլորներ՝ կը դողամ,
գիտակցութեան փոշի-ամպ՝ ո՛ր պահուղտիմ ես ինձմէ,
ամէն առտու տարիներս աղբի կոկիկ տոպրակներով ճամբու եզրին կը

շարուիմ

մէկը չկայ գայ հաւաքէ, գոնէ նայի մէջը լեցուած ինչեր կան,
ամէն առտու կիսատ անփորձ նոյն մարմինը կը գտնեմ շուքերու մէջ

ծուարած

վիզին խառանը կ'անցընեմ, դուրս կը հանեմ ապրեցնել, պտտցնել

փողոցէն

զբաղցնել, հետը խօսիլ ու կռուիլ

յետոյ իրար քէն ըրած՝ գիշեր հասնիլ բաժնուիլ,

այսքան տարի խեղճ ու կրակ տապանիս մէջ կծկուած

կը սպասեմ որ ջրհեղեղը վերջ գտնէ, շոգիանան ցամքին երթան բառերը
նայիմ ո՛ր եմ, հպիմ կեանքին, տեղալորուիմ ցեխին մէջ

լրտեսելու ի վերջոյ, բռնապետին ծպտումը:

Ա՛յս է մահը -

երբ ա՛լ շիջի վերջին յոյսը խեղճանոցի ճերմակ պատի կրափիթին կարդալու հասկնալու ինչու համար՝ մենք, ակամայ կամաւորներ՝

մէկիկ մէկիկ ուրիշին տեղ պիտի մեռնինք:

Հազիւ ծառը կրցաւ հասնիլ:

Կուրծքին տակ, աչ կողմը, խորերը ցաւը կը տարածուէր ու նոյն ատեն կը զարնէր կզակին երկու ծայրերը, ականջներուն տակ ու նաեւ անոթներուն: Թեւերը արդէն կ'ուծաթափուէին, քիչ ետք ոտքերը կը սկսէին թուլանալ ու այն ատեն պէտք էր նստէր:

Ձախ թելը անցուց ցած ճիւղին շուրջը ու կոթնեցաւ *հիմա կը հանդարտի մտածելով*: Սակայն վանդակին ցաւերը շարունակեցին, տարածուեցան, մոծովցան ու հիմա ճիշդ կուրծքին մէջտեղը, դանակի պէս կեղրոնացեր խրէր էին, ծանր մութ վտանգի մը պէս: Յանկարծ խողովութիւնը չստակցեր էր ու լեցուեր լոռութեամբ:

- Ի՞նչ պիտի ընեն:

Օրական քանի մը անգամ երեւակայած էր ասանկ կացութիւն մը, մանաւանդ հոս, ձմրան ձեռքը, ձիւներուն մէջ, առանձին *վախնայիք բան չկայ* խորհեցաւ: Բերանը կը չորնար կոկորդը կը խցուէր ու արդէն քրտինքի շատ բարակ խաւ մը կը ծածկէր ճակատը:

- Պէտք չէ ցաւը այսքան տեւէ

Խիթերը հիմա ուներուն վրայէն անցեր էին, զարկած կոնակին ու մարմինը ներսէն կը ճեղքէին սուր, անդու հարուածներով *ի՞նչ կ'ըլլամ կոր* մը-տածեց բայց դեռ վախ չկար *ատիկա վերջը պիտի գայ* շուրջը նայեցաւ ձիւն ձիւն ամէն կողմ ու՛ր կը պահուրտի վտանգը, հիմա ցաւի սլաքները կը սուզուէին կոկորդէն վար, ներսերը ու կը տարածուէին վանդակին բոլոր կողմերէն դէպի գերագոյն կէտ մը որ ու՛ր էր:

Ծունչը սկսեւ էր դժուար գալ:

- Նաչթրոն, նաչթրոն, շուտ

Երկվայրկեան մը յոյս մը փայլեցաւ ուղեղին մէջ: Ակռաներով խածաւ աչ՝ ձեռքին հաստ կաշիէ ձեռնոցը, քաշեց հանեց, յետոյ գետին ձիւնին վրայ ձգեց *շուտ բռէ՛* անցաւ մտքէն սակայն սառեւ էին ձեռքերը *նայթրոն* կրկնեց: Հիմա թմրած մատներուն վերարկուին կօճակները քակել պէտք էր, անշարժացաւ՝ բայց ցաւերը դեռ հոն էին, զինքը ներսէն լեցուցած, գրկած: Պաղէն մատները կը սառէին բայց փորձեց քակել, չյաջողեցաւ, վար ինկաւ թելը, ալ բոլորովին ուծաթափ *ի՞նչ պիտի ընեն՝ աստուած իմ*, գլուխը դարձաւ աչ ու նայուածքը գնաց տասը քայլ անդին տան մեծ պատուհանին:

- Ու՛ր է Սիրանոյշը

Անունը հազիւ անցաւ մտքէն ու արդէն տխրութիւնը համակեց զինքը, ալիք ալիք խառնուելով ցաւերուն ու անձկութեան *ախ կենիկ ո՞ւր ես* ներսը անշարժ, անշշուկ պառկած ըլլալու էր, ճակատագրին համակերպած, տիեզերքի միակ ու մեծագոյն ողբերգութիւնը: Եւ փողոց գնաց նայուածքը, ոտքէնը հազիւ կը բռնէին. շունչը դժուարութեամբ կու գար այլեւ *ցաւ*՝ *ի՛ր ցաւը* բայց վայրկեան մը իրեն այնպէս թուեցաւ թէ ինչ ալ ըլլար իրեն

հիմա հոս՝ միշտ յոյս մը պիտի մնար, նոյնիսկ եթէ մեռնէիւ ըլլար... Վեր-
ցուց թելը ու մեծ ճիգով յաջողեցաւ քակել առաջին կօճակը, յետոյ հառ մըն
ալ բայց շարժումը սաստկացուց ցաւը եւ ստիպուեցաւ անշարժա-
նալ ու ականջ տալ սրտին հարուածներուն արձագանգին որ կը ցնցէր գի-
տակցութիւնը, բունքերէն կոտտալով:

Քիչ ետք աչքերը նորէն փնտռեցին պատուհանը: Հոն էր... հոն էր
Հոգիս շշմռաց սակալն ուժ չունէր անոր նշան ընելու մինչ ան իր բարակ
ձեռքերը կ'օրօրէր օդին մէջ, բան մը կ'ըսէր ոսկրոտ անարին, տրտմած
դէմքը, սեւ ուռած աչք մազերը *ախ Հոգիս, քեզի համար էր ըրի, խնդա,*
մէկ անգամ խնդա: Տարօրինակ ուրախութիւն մը ծագէր էր Յակոբին
ներսը, գլուխ դարձուց անդին, պարտէզին ծայրը ու կիսատ մնացած ձի-
նամարդը *քեզի համար է, քեզի...* տարեղարձ... *ես չի՛նեցի քեզի*
համար... *կէս մնաց...* Ետ նայեցաւ սակալն հոն չէր, նորէն մինակ էր
իմք, շունչը կարճ սկսէր էր գալ, ցաւը պիտի պաշթէր կտրծքին մէջ *ու՛ր ես*
ու՛ր ես Սիրանոյշս...:

Հագիւ կրցաւ թելը, ձեռքը վերցնել, ընդարմացած մատները բանկոնին
վերի գրպանը մտցուց, դուրս հանեց պզտիկ սրուակը, վաշիկեան մը ան-
շարժացաւ, սպասեց... Երբ զգաց թէ ուժ հաւաքած էր, բերանը տարաւ
սրուակը, ակուններով բռնեց կափարիչը, դարձուց, բացաւ, նորէն ստիպ-
ւեցաւ անշարժանալ: Քրտինքը կը հոսէր ճակատէն ու ամբողջ մարմինը
կը դողար պաղէն ու տկարութենէն: Այլալլած՝ քակեց թելը ճիւղէն ու քարի
մը պէս փլաւ ծառին ստորոտի ձիւնի դէզին մէջ: Կռակը բռնին՝ տարտա-
մօրէն նշմարեց ձիւնամարդը, գլխուն սկովտիական քաւքէթը որ Սիրանոյշ
մեղրալուսնին Պահամայէն գնած էր, պատկեր քաշուէր էին, խնդալով եր-
գելով պանդոկին պարտէզը... *ախ Սիրանոյշս, իմ դժբախտ կինս...*
ներէ ինծի... *ես եմ քեզ կը մեռցնեմ...* մինչ խիթերը մեծ թմբուկի մը
հարուածներուն նման կը խտանային, կը թանձրանային ու կը հարուա-
ծէին կտրծքին աչ կողմը ու ատկէ վար դէպի մարմնին անծանօթ խորշե-
ր: Փողոցին միւս կողմի սուրներէն ծուխ կը բարձրանար, տեղէ մը օրօյի
ձայն եկաւ, յետոյքը սկսէր էր սառիլ *դեռ կեանք կայ* անցաւ մտքէն հիմա
կ'ըլլեմ ձիւնամարդուն թելերը կը դնեմ... միայն թէ ցաւը կենայ... ու դժուա-
րաւ ձախ ձեռքին ձեռնոցն ալ ակուններովը հանեց: Ծունկներուն տակը,
անոթները ցախ կեղորոններ եղած էին *ի՞նչ կ'ըլլանք կոր ծօ* մտածեց ու
այն ատեն սիրտ խառնուութ մը զգաց...

- Շո՛ւտ. նայթո՛ւն

Մտածումին հետ՝ վախը եկաւ:

Կռակէն ապակիի վրայ զարնուող մետաղեայ հարուածներու ձայն մը կար
սակալն կարելի չէր ատոր ուշադրութիւն դարձնել *սիրտ խառնուութը...*
սիրտ խառնուութը ատ է նշանը կաթուածին կրկնեց մեքենաբար, անըզ-
գամ թոյլ մատներով բռնեց սրուակը ու պարպեց ձախ ափին մէջ: Ճերմակ,
պզտիկ դեղահատները դուրս թափեցան, քրտի՞նքը թէ յուզումը կը նե-
ղէր տեսողութիւնը, հատիկները գլտորեցան ձիւնին մէջ: Սարսափահար՝
գոցեց ափը: Սակալն թելը մինչեւ բերանը հանելու ուժ չէր մնացեր մէջը

ու անապարանքին, վախին մէջ բռնէր էր շնչառութիւնը, լանկարծ կուրծքին աչ կողմէն ցար ալնքան սաստկացաւ որ չկրցաւ շարժիլ *աս ինչ կ'ըլլայ կոր աստուած իմ անցաւ մտքէն կ'երթանք կոր...* Հագիւ կրցաւ դեղահատը բերանը առնել, լեզուին տակ անցընել՝ բայց վախցաւ շուրթերէն: Այդպէս վար կախուած, հագիւ շնչելով՝ մնաց, սրտին ուժգին, անկանոն հարուածներուն անձնատուր, ցաւին մէջ սեղմուած, աչքերը ձիւնին յառած անթարթ:

- Յակոբ... Յակոբ...:

Սիրանոյշ ճակատը ապակիին դրաւ, գոցեց աչքերը... միայն հասկնար ինչ կ'ըլլար կոր իրեն ու Յակոբին երեք ամիսէ ի վեր, ինչո՞ւ այդ պաղին դուրսը նստեր է ներս չի գար, պիտի մսի, սիրտն ալ հիւանդ է ես ի՞նչ յանցանք ունիմ եթէ գլուխս կը ցաւի գիշեր ցեցեկ... կը նիհարեմ... ինչո՞ւ կը փախիս ինձմէ...: Ծակատին ցար երկվայրկեան մը մեղմացաւ, վերցուց գլուխը Յակոբ... Յակոբ... մի լքեր գիւ, կը վախնամ կոր մի նակ...: Ծերմակ ամաշտեան մէջ մարդու կերպարանք փրկուողէն... փողոցի ցանցառ տունները լուրջամբ փաթթուած դագաղներ էին ու կեանքը կը հատնէր ամէն կողմէն ու միայն ձիւնամարդը կը փորձէր մնալ, տոկալ առանց թեւի, ծիծաղելի քաւքէթը գլխուն եւ ինչո՞ւ Յակոբ ներս չէր գար, պիտի մսէր հոն ձիւնին նստած...: Վերցուց ձեռքը, մատուցիով զարկաւ ապակիին:

Կէս վայրկեան անցած ըլլալու էր նայթրոն առնելէն ի վեր՝ եւ սակալն դեռ ոչ մէկ տարբերութիւն կար վիճակին մէջ: Զիւնին վրայի պարապ սլորակին նայեցաւ ու գիտէր որ այս վայրկեանէն սկսեալ ոչինչ, ոչինչ կրնար ընել, ոչ ինքզինքնին ոչ ալ Սիրանոյշին՝ որ դանդաղօրէն պիտի մեռնէր հոն սենեակին անկիւնը թեւերը ծալած վիրաւորը թռչունի մը պէս եւ ինչ ոչինչ կրնար ընել... Համակերպած, կուզը տնկած, Յակոբ մնաց իր դիրքին մէջ, անկարող շարժելու: Քրտինքը թրշած էր ամբողջ մարմինը, փսխութի բարակ թել մը կը հոսէր բերնին եզերքէն *աս է, կաթուած է...* նորէն մտածեց ու մտքի անգագելի դող մը ցնցեց զինքը, կը կափկափէին ակոսները ու հագիւ կրնար շնչել այլեւս:

Յանկարծ, առանց պատճառի, կտրծքին ցար աստիճան մը եւս աստկացաւ - մեքենայի պէս վեր նետուեցան ձեռքերը, բռնեց վերաքլուն, քաշեց, ճմլեց, ուզեց բզկտել. հասնիլ ներսը, ճանկել կտրծքին մէջ խորերը, հանել նետել չարչարանքը: Անզգալաբար մարմինը շտկուեց էր նստած տեղը ու սարսափէն տարուած՝ ճիգ մը ըրաւ լեցուն, անսահման շունչ մը առնել, ազատուիլ: Բայց ամէն ճամբայ գոց էր շուրջը եւ ներսը՝ ուր ճնշումը կը շարունակուէր կուտակուիլ ոչ... ո՛չ պողոտայ մըն ուր զանկէն մէջ ու յանկարծ խուճապը մէջտեղն էր, սանձը կտրած վայրի գազանի մը պէս անզուսպ, կատաղի:

Փսխութեով, քրտինքով ծեփուած ալանդակ դէմքին մէջէն դիւահար

աչքերը բացուեցան այն ատեն, մարմինը գալարում՝ երեքաց, գլուխը աչ ու ձախ շարժեց յուսահատորեն բայց չկրցաւ ձայն հանել: Յակոբ հագիւ ժամանակ ունեցաւ մտածելու երկրորդ նայթրոնի մասին ու Սիրվարդի մասին եւ արդէն ուշ էր - սարսափը կը խցէր օդին ճամբան, վերջնականապէս: Աչքերը դուրս ինկած, բերանը բաց ու քարացած անգործութեան սահմանին՝ ան սկսաւ ճանկել կոկորդը, վիզը, յետոյ բերանը...

- Ա...ա...ա

Այդչափ: Ու յանկարծ՝ անարկու ճնշումը պայթեցաւ ականջներուն խորը, դուրս պոռթկած, ողողեց գիտակցութեան խառնիճաղանճը ու դեռ իր թափը լիովին չզտած՝ մեքենական շարժումի մը արագութեամբ՝ փոխուեցաւ ցաւի սուր, դաժան, անվերջնալի նիզակի մը որ մխրճուեցաւ սրտին մէջ: Զգայութիւնը, տասնապատիկ աւելի ուժգին քան կուրծքին ցաւը, մէկ անգամէն իր սաստկութեան գագաթնակէտին հասաւ, կտորեց վանդակը, դուրս նետուեցաւ: Յակոբին այնպէս թուեցաւ որ այդ երկվայրկեան իր անձը կը փշրուէր ու կտոր կտոր կը տարտղնուէր ու իրմէ անդին անցած էր, հասած ոչնչութեան...:

- Մեռայ...

Հոն էր բառը, իրմէ անջատ ու շատ յստակ չէր իրեն համար թէ ով էր մեռնողը: Վար ինկան թեւերը, գլուխը առաջ կախուեցաւ բայց մարմինը ձիւնին մէջ չգլտորեցաւ: Պաղի զգայութիւն մը դեռ յամեցաւ մինչ լուռ անդորրութիւնը կը տեղատրուէր անորոշ ցաւի մեղմ կոտտանքին մէջ:

- Մեռայ...:

Նորէն բառը եկաւ ու այս ատեն ամէն կողմէն մթութիւն մը հոսեցաւ բայց ինքը չկար ու մարմինը ծանրութիւնը կորսնցուցած՝ կ'անհետէր *մեղք եւ* մտածումը գնաց եկաւ մինչ ինք տակաւ կը խրէր, կը կորսուէր համատարած սեւութեան մէջ: Հեռուներէն ու շատ տարտամ՝ ապակիի զարնուելու ձայն մը հասաւ *կու գամ կոր Սիրանոյշ*: Բառերը յանկարծ գլխուն մէջ էին, այնքան թափանցիկ, այնքան յստակ որ երկվայրկեան մը անոր տխուր դէմքը երեցաւ: Յետոյ՝ նորէն ոչնչութիւն ու լռութիւն, տարօրինակ բացակայութիւն մը ամէն ինչի, յետոյ նորէն ներկայութեան զգայութիւնը որուն հետ, վերջին անգամ ըլլալով՝ գութի, սիրոյ խառնուրդ ըզգացում մը որ շեղբի պէս կտրեց գիտակցութեան վերջին ծուլները *Հոգիս... Ներք... կառչեցաւ իրմէ հեռացող ու իրեն մօտեցող բաներուն, տակաւ հաստատուող անդորրութեան միակ անիրական ներկայութիւնը դուռ մի մեռնիր...* ու այդ երեք բառերէն որոնք յանկարծ տեղէ մը եկեր էին՝ սեւ տխրութիւն մը ծորեց, գրկեց զինք ու առաւ տարաւ...: Յակոբ վերջին ճիգ մը ըրաւ բառերը կեցնելու բայց ատոնք արդէն կը կորսուէին մութին հետ:

Ատեն մը ետք, ականջին վժժոցը, շատ տարտամօրէն հասաւ հեռուներէն, յետոյ այդ այլ դաղրեցաւ:

Մեռած էր, գէթ՝ այդպէս թուեցաւ իրեն:

Կարելի չէ կեանքը ապրիլ

կեղտոտ պատռած հագուստներով պիտի երթաս գոհներէն, ճառ ու գինով,
ծունկի եկած՝ պիտի մոտաւ որեւէ բան, հեկեկալով, հաչհոչելով
նեղ մայքերէն պիտի սողաս հիւսնոյ քաղցած, դոժինքի թել բերնէդ կախ,
մարդիկ կարգով թքնեն երեսիդ ու շունները վրայ միզեն
ձմրան սառին փոթորիկին, աշնան խոնաւ ցուրտերուն՝ պիտի դողաս

անսփոփ

ակռաներդ պիտի թափին, ականջներդ ծանրանան
աչքիդ լոյսը տկարանայ, գլխուդ վրայ մազ չմնայ,
պիտի լանկարծ ծերանաս, մահուան հոտը գայ բերնէդ ու կլիրդ չկայնի,
աղբանոցներ գաղտագողի խուզարկես ու կողոպտես,
փողոցներէն սիկարէթի կնատ պիտի հաւաքես,
մարմինդ վերքով ծածկուի, քունը փախի աչքերէդ
չլուացուած չածիլուած, բոպիկ անտուն մութերուն մէջ սլքտաս
յօդացաւի բուռին մէջ կմախքդ տակաւ կարծրանայ, ժանգ կապէ
յոյսդ կտրես ուրախութիւն ու տառապանք ապրելէ՝
հետզհետէ կեանքի ջիղին մօտենաս...

աշխարհի մէջ ոչ ոք ուզէ մտաբերել անունդ, ոչ ոք ճանչնայ քու դէմքդ,
ժահոտ գալտի քանդումին մէջ պիտի թաղուի անցեալդ
մանկութենէդ ոչ մէկ յուշ պիտի ծաղկի առանձնութեան սալարկներու ճեղ-
քերուն,

կամաց կամաց լեզուդ պիտի բռնուի ու բռներու պէտք չունենաս
գիտակցութեան հեցը կոտորի, վանկ ու փշրանք թաւալվոր կործանին
ու քեզ մնայ անպէտ, ականո՛ցը քու անձիդ
պարաւ, պակնած, անապրելի:

Կարելի չէ մահը մեռնիլ -

կը սեղմուիմ անծայրածիր թափօրին մէջ կը հետևիմք դագաղին
մէջը պառկած շքեղ հագուած չոր վանկերը ծառերու հետ կը շխրտան
ու կը լեցուին հազարաւոր բեռնակառքեր արծազանգը հրապարակ կը

թափեն

առասպելի մազկռիմէ արքային պէս՝ ինչ որ ունիմ կը բաշխեմ
այնքան առատ ու անխնայ՝ որ տակը ինկած կը խեղդուինք
բայց ես գիտեմ, ոչինչ ոչի՛նչ կրնայ մեռնի՛լ որքան ատեն ես ողջ եմ,
անմահութեան ապրիմ-մեռնիմ մէկիկ մէկիկ կը փրցնեմ վերջ չունի
սակայն հսկայ ամբարտակը ճեղքուած էր սկիզբէն
կաթիլները մէկը միւսէն պիտի բխին կարելի չէ կեցնել
ամէն հիւլէ պիտի ուզէ հիւլէ ըլլալ՝ բայց ծախողի
ու շուարած՝ տեղ մը կայնի ճամբուն վրայ կեանքէն մահ
ու ետ կեանքի քառուղիին՝ կը քաշկռտուիմ արիւնլուայ կիսաքանդ
ես եմ միակ բալասանը, միակ գոհն ու դահիճը
դատաւարտուած, աստուծոյ պէս՝ անիմքնութիւն ու անողորմ բարերարի
դեր խաղալու
քիթիս տակէն խնդալով՝ ամէն վէրքի մէկ ատ պզտիկ բառ կը դնեմ՝ կը
բուծեմ

մինչ հրաշքով գերեզմաններ կը բացուին, ոտքի կ'ելլեն մահամերձներ
արձաններէն, պատկերներէն հում, մերկ խարխուլ խառնիճադանն կը
շարժին

առօք փառօք կու գան բազմիւ իմ մէջս,
չանկարծ չկան, զիս կողոպտած փախած գացած մեռած են...
սակայն մահը իմս է, միայն ի՛մս, ես միակ ոճրագործը
ու պատժուած՝ իմ գետնափոր խուցիս մէջէն, մայթին տակէն
կ'անանց խնդուք, մարդու քայլեր պիտի լսեմ մի միայն
շուքեր իյնան ապակիին ու անցնին
նեռուններէն մեթրոյի մը դղորիւնը որ կը հատնի
յիշատակի պղպշակներ սրտիս երեսը ելլեն ու պայթին
որպէս թէ ես գոյութիւն իսկ չեմ ունեցած,
այլ լոկ կեանք մը
անդիմագիծ սեւ-շուկայ միջազգային պոռնիկի անմխիթար որբութիւն,
հարսանեկան զգեստի անբիծ պատռած քղանցքը
չանկարծ կ'անցնի վրայէս, կը շղոշայ փողոցներէն տանիքներէն միմէն

երկինք ու կ'անհատի.

մեծդի շամփուր ժամանակի՝ ուղղահայեաց շուքը ինկեր երկվայրկեանի

խեղճ սրտիս՝

կը դառնայ հա՛ կը դառնայ, կարելի չէ գլխուս պտոշտը կեցնել, ծուխը

աշխարհ բռներ

խզոններէն ժժմակներէն մինչեւ դաժան ցիւները

անդէմ անթիւ եսի եթեր՝ անջրպետի վարաքոյրը ծալք ծալք կ'ոռի

լոյսի մորթին կը քսուի կը շշմշալ, համը ու կոշը յուշարար ու դերասան

բեմին կայներ շուարած՝ կ'անգիտանայ ինչ դեր խաղայ

ի՛նչպէս գիտնալ բառէն անդին միւս կողմը՝ թրուածին կայ թէ չկայ,

հովերուն մէջ իմաստի մղեղ կը ծփա՛յ,

ի՛նչ է հոնտեղ պապանձումն Զաքարիայի թեւերդ կախ կը մնաս

չե՛ս գիտեր թէ ցերեկ գիշեր միայն փորձ է եղածը, ամաթէօր ենք բոլորս ալ

պիտի բեմ գանք քառսուն տարու հոս հոն քալենք յուսալով որ կը ծնինք

մթութեան մէջ պոռանք կանչենք, սէրը փնտռենք խելայել

յանկարծ մեռնինք բառէ շինուած հերոսին տեղ՝ առանց զինքը ճանչնալու

եւ մեզ տանին սարկաւազով քահանայով ու թաղեն,

ուզածիդ չափ դուն բողոքէ բարկացիր, բացատրէ թէ դեր կը խաղաս, դեռ

ողջ ես

դեռ քու կեանքդ չ'ապրեցար, թէ անմ'ահ ես....:

Այսպէս գամուած ներկային մէջ

անիծապարտ Պատիկ Մ'հեր՝ աչքերս բաց պիտի սառնիմ առ լաւտ,

գաղտնակիս վրայ Տամոզլէսի կեանքի սուրը պիտի կախուի

որպէս պատիժ ու փրկագին,

ինչպէ՛ս քաւել, ազատուիլ, ալլելս հարցում չհարցնել

ու վերջ գտնէ աքսորը որ կը սպառնայ մեռցնել

սա ամայի ճամբու եզրին զիս լքել

անզգացում հանդիսատես՝ իմ գոյութեան տեղքայլին ու տողանցքին

ուրիշներու մարմիններով տօնա՛վաճառի փոշիներուն, աղմուկին մէջ:

Ե՛ս եմ ողջը

կաղ խլրտուն՝ ողողակին խառնուած, տաշեղներու ջաղրին մէջէն կը

շարժիմք

մերկ կը ծորիմ խորտ ու բորտ, բզիկ բզիկ առկախուած

խարշափին հետ կը ժղլեմ, կը պղտորիմ շուար թլուատ՝ կը լռեմ

միա՛կ ողջը՝

բայց բա՛ռը կ'ապրի իմ տեղս

անքիծ ողորկ քէֆը-սիրող ամուրի, անհիգ կայներ կանգառին

ցաւ ու հաճոյք բոզերու հետ սակարկելով

ոչ մէկ հառաչ ոչ մէկ փետուր հովուն յանձնած տակաւին,

ան է միակ երիտասարդը յաիտեան

ու, տարօրինակ՝ ան է որ միշտ կ'անհետի

իր շատախօս քնքուշ տոգոյն սիրուհիին փաթթուած

ետ կը հոսի անջրպետի գորշ ու ապսիւրտ շշուկին,

մինչ ես առդին

առանձնութեան մամլակին մէջ բռնուեր եմ

ու կը մաշիմ անվերադարձ մեծ խարտոցին շոյանքէն,

ծեր սուլթանի կանանոցի կոշուղիին պատին կառչած

թէժ անպիտան մոլախոտ՝

ի՛նչ բոյրերու հպումներու կարօտներով կը կռնծիմ, կը հիւծիմ

լոյսը կ'ուտէ պարագիծս, մութը կ'արէ ջրաներկէ դիմակս

կեանքի տարփոտ ցոփ ու խենէշ, անչազելի ախորժակին զոհ կ'երթամ,

բոզանոցի անկիւններուն սլքտացող հիւանդ անտուն սրճեփ մը:

Երկրաշարժը դեռ չէ կեցած, կը տատանի որմնադիրը

լոյսը կ'եռայ հեռուներու քառուղիին ու ես աչստեղ կալանաւոր հաշմանդամ

պիտի շարժիմ առանց ինծի զարմուելու, պիտի հասնիմ հրապարակ -

ամէն կածան որ ճահիճէն կ'ազատուի՝

չարչարանքի լունտերուն հետ դէպի գագաթ կը վազէ

կողուցքի ճիշ ու ոստումի կը փոխուի

յանկարձ սակայն կը սալթաքիմ տառապանքի փուշերուն մէջ կը գլտորիմ

ոչինչ ապրած իմ կարճ կեանքի շառայլէն՝

բացի սերէ, հաւանաբար

որ կը ծնն ցաւին մութին, որ կը ծաղկի կը մագլցի իր հրաշքի ուիք-լնտին
մահուան շուքին պլլուած կը խնդա՞յ թէ կու լայ,

խուճապահար գաղտնի բառը կը փնտռէ գանձի աշրը բանալու,

ես իմ բաղեղ հաստաբուն՝ ի՞նչպէս քակուիմ ինքզինքէս ու ողջ մնամ

տակաւին

ես իմ աչքով կը շլանամ հայելիներէն

պզտիկ կլոր կուրցնող արեւի ցոլք կը խաղայ

ամէն կողմէն ինձ կը նայիմ՝ ինչպէ՞ս տեսնեմ բռնեմ ու սիրեմ

սիրոյ մարմին ո՞ր եմ, ո՞ր եմ վանկերը անկարելի ապրումին

առնեմ շարեմ քով քովի կարելի է լանկարծ բան մը կը պատմեն...:

Օգուտ չունի -

բառը բուսեր հիւրանոցին մէջտեղը եւ ճիւղերը տարածեր

ստնտուններ կը մրափեն ստուերին, երեխաներ կ'օրօրուին

իրիկուն չեղած հարիւրներով պիտի կախուինք անձնասպան

բայց չմեռնինք ու հոգեվարք՝ ժամադրութեան նստարանին՝ սպասենք

եւ սերը գայ մեզ փնտռէ առանձնութեան զնտանին մէջ ու չգտնէ

աճապարէ հրապարակ, անցնի ծովեր երդիքները

մինչեւ հասնի անհիւրընկալ ափունքները մարդ ըլլալու դժոխքին

պարիսպները դուռ չունին, լանցանքի թուխպ՝ ծանր տամուկ կը ծածկէ

փախուստ չկայ...

կեանքը վերքն է գոյութեան մը՝ ուրկէ սերը փախած է

ետին թողած իր գեռնոցը, գրամեքենայի աղմուկ մը,

տասը հոգի կուտրած պասին շուրջը կեցեր՝ ի՞նչ ընեն, մարդ մարդասանք

չ'երեւիր

մինչ կը փորձէ փշրել հսկայ պարիսպները դժոխքին՝ ներս մտնել

ո՞վ կայներ ամաչութեան քարափին հին հագուստներ կը ծախէ

կեանքը մահը մեզի չէ որ կը պատահին՝ բայց մենք է որ կը զոհուինք

կը սակարկէ կը բարկանայ կը սպառնայ՝ որ գէշ դրամագլուխը ազատ է

գրնէ աստուած մը ըլլար, բարեւ մը տար

կեանքի ցաւը, մեր կոնակի խաչին շուքը ոչ ալ մահը

ալնքան գէշ են՝

որքան իյնալ հրոյիլ դորդացող մեքենային անիւներուն արանքը

ոչ իսկ գիտնալ թէ հոն էիր սկիզբէն՝ երբ մեքենայ իսկ չկար

ու այդ տեղէն պիտի չելլես յաիտեան,

պիտի ուզես ինքզինքդ բզկտել պարապութեան պաստառէն ուր փակեր ես

քառակուսի աշխարհին հետ՝ լայնք ու երկայնք պրկուած

սառնց խորքի պատերու մէջ ողջ ողջ թաղուած կը տոկանք

գիտակցութեան մորթին մէջ զիս փաթթեր են ի՞նչպէս ձեռքս դուրս հանեմ

հասնիմ ինծի ո՞ր կ'երթամ կոր ամայութեան մայրերէն

կեցիր կեց'իր... ինձ սպասէ՝ մեզ խաբեր են կեանքէն մահ

եւ դարձիր, չկայ ճամբայ ոչ ալ ճամբորդ

միայն կիսատ շինուած ու լքուած օթեւան մը

միայն յոյս-մը ապրելու սիրելու եւ մեռնելու

սառնց երբեք բառի ամուլ արգանդէն դուրս կարենալ ելլելու...: